ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ-ն ՀՀ ՀԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/21 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
3	«Համագործակցության համար»-«Համագործակցության համար» մեդալն իրենից ներկայացնում է 35մմ տրամագծով երկկողմ պատկերով շրջան: Պատրաստվում է պղնձի հատուկ համաձուլվածքից: Դիմերեսի ֆոնը իրենից ներկայացնում է պրուֆ ծածկույթ:Մեդալը երկու կողմից եզրագծված է 0,5մմ լայնությամբ շրջանակով: Մեդալի կենտրոնում տեղակայված է Կոմիտեի ռելիեֆային խորհրդանիշը՝ 30x15 չափերով, որը ունի գլխավերևում կորաձև եզերված Հայաստանի Հանրապետության եռագույնը՝ կարմիր, կապույտ, նարնջագույն էմալներով: « Համագործակցության համար» մեդալի հիմնական գույնը ոսկեգույնն է: Կենտրոնում պատկերված վահանը արծաթագույն է:Մեդալի դիմերեսին վերևի հատվածում կորաձև գրված է «ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ» գրառումը: Մեդալի դարձերեսին առկա է «ՀՀ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵ» հորիզոնական եռատող ռելիեֆային գրառումը, որի ներքևում տեղակայված է մեդալի հերթական համարը:Դարձերեսի վերևում կորաձև ռուսերեն գրված է «АНТИКОРРУПЦИОННЫЙ КОМИТЕТ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ», իսկ ներքևում կորաձև անգլերեն գրված է «ANTI-CORRUPTION COMMITTEE OF THE REPUBLIC OF ARMENIA»: Մեդալը կապօղակի միջոցով միացված է մետաղյա հնգանկյուն կախիչին, որի միջոցով մեդալը՝ ասեղային ամրակի օգնությամբ ամրանում է համազգեստին: Հնգանկյուն կախիչի ամենալայն մասը 44.5-ից 46.2 մմ է, ամենաբարձր մասը՝ 48-ից 51 մմ: Կախիչը պաստառված է 23.5-ից 24.5 մմ լայնություն ունեցող մուգ կապույտ ժապավենով: Ժապավենի կենտրոնով միմյանց զուգահեռ և 4,8 մմ հեռավորության վրա անցնում են 4,8 մմ լայնությամբ ոսկեգույն 2 զոլակներ: Կախիչի դարձերեսին առկա է քորոց՝ հագուստին ամրացնելու համար: Յուրաքանչյուր մեդալ պետք է դրված լինի համապատասխան տուփի մեջ

	/160X110X32մմ/:Առավել մանրամասն կից ֆայլում:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ОАО ЕЮЗ имени ЭМИЛЯ ГРИГОРЯНА в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՀԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/21 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
3	